

**Հանձնաժողովի հաղորդագրությունը Եվրոպական պառլամենտին և խորհրդին. 2007 թվականին Եվրոպական հարևանության քաղաքականության իրականացումը**

**{SEC(2008) 391} {SEC(2008) 392} {SEC(2008) 393} {SEC(2008) 394}  
{SEC(2008) 395} {SEC(2008) 396} {SEC(2008) 397} {SEC(2008) 398}  
{SEC(2008) 399} {SEC(2008) 400} {SEC(2008) 401} {SEC(2008) 402}  
{SEC(2008) 403} /\* COM/2008/0164 վերջնական \*/**

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ,**

Բրյուսել, 03.04.2008թ.

COM(2008) 164 Final

**ԵՎՐՈՊԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻ ՀԱՂՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՊԱՌԼԱՍԵՆՏԻՆ ԵՎ ԽՈՐՀՐԴԻՆ**

2007 թվականին Եվրոպական հարևանության քաղաքականության իրականացումը

{SEC(2008) 391} {SEC(2008) 392} {SEC(2008) 393} {SEC(2008) 394} {SEC(2008) 395}  
{SEC(2008) 396} {SEC(2008) 397} {SEC(2008) 398} {SEC(2008) 399} {SEC(2008) 400}  
{SEC(2008) 401} {SEC(2008) 402} {SEC(2008) 403} /\* COM/2008/0164 վերջնական \*/

## **Նախաբան**

Վերջին մի քանի տարիների ընթացքում Եվրոպական հարևանության քաղաքականությունը (ԵՀՔ) հնարավորություն է ընձեռել ԵՄ-ին և իր գործընկերներին արձանագրել ակնհայտ առաջընթաց միմյանց միջև համագործակցությունը խորացնելու և այն գործընկերների կարիքներին և հավակնություններին հնարավորինս նպատակաուղղելու ուղղությամբ: ԵՀՔ-ն աստիճանաբար դառնում է բարեփոխումներ իրականացնելու և զարգացում ապահովելու համար փոխադարձ շահավետ գործընկերություն, որն օգնում է մեր հարևաններին առավել սերտ հարաբերություններ ծավալել ԵՄ-ի հետ, նոր հնարավորություններ է ընձեռում իրենց և մեր քաղաքացիներին և Միության սահմաններից դուրս խթանում է տարածաշրջանային ինտեգրումը: Մույն հաղորդագրությունում ներկայացվում է ԵՄ-ի՝ ԵՀՔ շրջանակներում ընդգրկված հարևանների (1) հետ հարաբերություններում արձանագրված զարգացումների ամփոփ նկարագիրը: Այն ընդգրկում է 2006 թվականի նոյեմբեր ամսից հետո ընկած ժամանակահատվածը (2): Հանձնաժողովի 2007 թվականի դեկտեմբերի հաղորդագրությամբ (3) որոշվեցին այն ոլորտները, որտեղ առավել անհրաժեշտ է ԵՄ-ի միջամտությունը, դրանք են հատկապես առևտրի և տնտեսական ինտեգրումը, տեղաշարժը կամ տարածաշրջանային հակամարտությունների հասցեագրումը:

Ներկայումս զարգացած են այն կառույցները և գործիքները, որոնց շրջանակում տեղի են ունենում երկխոսությունը և համագործակցությունը: Նշված կառույցների և գործիքների մասին առավել մանրամասն նշվում է 2-րդ մասում: Ավելին, ԵՄ-ի և իր գործընկերների միջև հարաբերությունները գնալով սերտանում են, որի արդյունքում խթանվում է շատ երկրներում և մի շարք ոլորտներում ԵՄ ուղղվածությամբ բարեփոխումների նախաձեռնումը և իրականացումը: 3-րդ մասում ամփոփվում է գործընկեր երկրների

կողմից արձանագրված զգալի առաջընթացը, ինչպես նաև լրացուցիչ բարեփոխումների իրականացման անհրաժեշտություն ունեցող ոլորտները: Առավել մանրամասն տեղեկություններ կարելի է գտնել տվյալ երկրի համար պատրաստված Ընթացիկ զեկույցներում և Ընթացիկ ոլորտային զեկույցում, որոնք կցված են որպես աշխատակազմի աշխատանքային փաստաթղթեր: ԵՀՔ գործընկերների միջև քաղաքական, տնտեսական, սոցիալական և մշակութային բազմազանության, ինչպես նաև իրենց բարեփոխումների հերթականությունը և առաջնահերթությունը սահմանելու մասով առկա տարբերությունների համատեքստում նշված զեկույցներն անմիջականորեն համադրելի չեն: Սույն հաղորդագրությունում և վերջինիս հավելվածներում ներկայացված կառավարման ուղղությամբ արձանագրված առաջընթացի վերլուծությունը հիմք կհանդիսանա 2008 թվականի Կառավարման մեխանիզմների բարելավմանն ուղղված հատկացումների մասին որոշման համար: 4-րդ մասում հասցեագրվում են ԵՄ-ին և իր գործընկերներին վերաբերող բազմակողմ զարգացումները: Գործընկեր երկրների հետ ԵՄ-ի երկկողմ հարաբերությունների հետագա զարգացմանը վերաբերող եզրակացությունները ներկայացվում են 5-րդ մասում:

### **Ինստիտուցիոնալ շրջանակը**

Պայմանագրային հարաբերությունները. ԵՀՔ շրջանակներում ընդգրկված երկրների հետ, բացառությամբ Բելառուսի, Լիբիայի և Սիրիայի, կնքվել են Գործընկերության և համագործակցության համաձայնագրեր (արևելքում), ինչպես նաև Ընկերակցության համաձայնագրեր (հարավում):

Հիմնվելով նախկինում արձանագրված մեծ առաջընթացի վրա՝ 2007 թվականի մարտին ԵՄ-ն և Ուկրաինան նոր Ընդլայնված համաձայնագրի կնքման շուրջ բանակցություններ սկսեցին, որի նպատակն էր Ուկրաինան առավել մոտեցնել ԵՄ-ին՝ օժանդակելով հետագա ներքին բարեփոխումների իրականացմանը՝ Ուկրաինայի տնտեսությունն աստիճանաբար ինտեգրելով ներքին շուկային և հնարավորության դեպքում դուրս գալով Գործընկերության և համագործակցության համաձայնագրից և ԵՄ-Ուկրաինա գործողությունների ծրագրից: Այդ ժամանակից ի վեր տեղի են ունեցել բանակցությունների 7 փուլ, և երկու կողմերն էլ ակտիվորեն ներգրավված են իրենց զարգացող հարաբերությունների համար նոր հավակնոտ շրջանակի մշակման գործում: Երբ 2008 թվականի փետրվարին ավարտվեց Ուկրաինայի՝ ԱՀԿ-ին անդամակցության գործընթացը, նույն ամսում սկսվեցին ազատ առևտրի խորը ու համապարփակ ոլորտի շուրջ բանակցությունները՝ որպես Նոր ընդլայնված համաձայնագրի առանցքային տարր:

2007 թվականի հոկտեմբերին Խորհուրդը Լիբիայի վերաբերյալ ընդունեց նոր եզրակացություններ՝ պահանջելով Հանձնաժողովից տրամադրել բանակցությունների փուլում գտնվող հրահանգների նախագծերը՝ նպատակ հետապնդելով հետագայում կնքել ԵՄ-Լիբիա շրջանակային համաձայնագիր: Հանձնաժողովը դրանք ներկայացրեց 2008 թվականի փետրվարին: ԵՄ-ն առաջարկում է լիարժեք գործընկերություն ծավալել Բելառուսի հետ՝ պայմանով, որ Բելառուսը ժողովրդավարության, մարդու իրավունքների նկատմամբ հարգանքի և օրենքի գերակայության ուղղությամբ կձեռնարկի հստակ և համոզիչ քայլեր: Երկրում ժողովրդավարական կառավարման գործում առկա թերությունները վերացնելու ուղղությամբ Բելառուսի իշխանությունների կողմից ձեռնարկված քայլերը շարունակում են սահմանափակ լինել, և մինչ այժմ հնարավոր չի եղել այս գործընկերության ուղղությամբ արձանագրել որևէ առաջընթաց: Միևնույն ժամանակ տեխնիկական մակարդակով խթանվում է փոխադարձ շահերի մասով ծավալվող հարաբերությունների զարգացումը: ԵՄ-Սիրիա հարաբերությունները դեռևս կարգավորվում են 1977 թվականին կնքված Համագործակցության համաձայնագրով՝ մինչև Ընկերակցության համաձայնագրի նախագծի ստորագրումը:

**Գործողությունների ծրագրերը.** Հայաստանի (2006 թվականի նոյեմբեր), Ադրբեջանի (2006 թվականի նոյեմբեր), Վրաստանի (2006 թվականի նոյեմբեր), Լիբանանի (2007 թվականի հունվար) և Եգիպտոսի (2007 թվականի մարտ) հետ կնքված գործողությունների ծրագրերի ընդունումից հետո թվով 12 երկրներ սկսել են զարգացնել իրենց հարաբերությունները ԵՄ-ի հետ՝ օգտագործելով այս գործիքը ներքին բարեփոխումների օժանդակման համար և ամրապնդելով երկկողմ և տարածաշրջանային համագործակցությունը: Ինչ վերաբերում է Ալժիրին, շատ թվով աշխատանքային խմբերում և ենթակումիտեններում Ընկերակցության համաձայնագրի հիման վրա իրականացվել է քաղաքականության հարցերով երկխոսություն: 2008 թվականի մարտին Ընկերակցության խորհրդում որոշվեց ստեղծել համատեղ աշխատանքային ծրագիր՝ Ընկերակցության համաձայնագրի իրականացման համար առաջնահերթություններ սահմանելու նպատակով:

Առաջին գործողությունների ծրագրերն ուժի մեջ մտան 2005 թվականի սկզբին: Դրանցից երեքը (Ուկրաինա, Մոլդովայի Հանրապետություն և Իսրայել) նախատեսված էին 3 տարի ժամանակահատվածի համար: Քանի որ նշված երկրներն արձանագրել են զգալի առաջընթաց և ԵՄ-ի հետ նրանց հարաբերությունները ներկայումս գտնվում են վերանայման գործընթացում, որի նպատակն է առավել սերտացնել ԵՄ-ի հետ հարաբերությունները, համագործակցությունը ներկայումս և գործնական նպատակներով շարունակվում է տվյալ գործողությունների ծրագրերի հիման վրա:

**Գործընկեր երկրներում ներքին բարեփոխումների օրակարգը  
Քաղաքական երկխոսություն և բարեփոխումներ**

ԵՀՔ շրջանակներում ընդգրկված տարբեր երկրներում, չնայած այն հանգամանքին, որ վերջիններս առաջնորդվում են միևնույն առանցքային կարևոր սկզբունքերով, քաղաքական բարեփոխումների գործընթացները տարբեր են՝ արտացոլելով բարեփոխումներ իրականացնելու մասով նշված երկրների պատրաստակամության աստիճանը: ԵՀՔ-ի շրջանակներում ընդգրկված արևելյան բոլոր գործընկեր երկրները, որոնք համաձայնեցրել են գործողությունների ծրագրերը, ԵԱՀԿ-ի և Եվրոպայի խորհրդի անդամներ են, ինչը նպաստում է բարեփոխումների որոշակի օրակարգի իրականացմանը՝ նպատակ ունենալով դրանք առավել համապատասխանեցնել ԵՄ-ում գործող հիմնարար ստանդարտներին: Տարածաշրջանի շատ երկրներում բարեփոխումները ևս իրականացվեցին տնտեսական աճի և հարաբերական կայունության հենքի վրա: Հարավային երկրներում բարեփոխումների օրակարգը հիմնված է Բարսելոնայի հռչակագրով ամրագրված համընդհանուր արժեքների վրա, որոնք, ինչպես նաև ՄԱԿ-ի շրջանակներում ստանձնած պարտավորությունները համարվում են հենանիշեր: Շատ երկրներում, որտեղ դեռևս պետք է ամբողջությամբ իրականացվեն այս ստանդարտները, քաղաքական բարեփոխման գործընթացն դանդաղ է իրականացվում : Լիբանանում և Պաղեստինի գրավված տարածքում ստեղծված քաղաքական իրավիճակը դեռևս թույլ չի տվել ի կատար ածել գործողությունների ծրագրի նպատակները՝ չնայած գործադրվող ջանքերին: Ընդհանուր առմամբ, ԵՀՔ գործընկերների քաղաքական երկխոսությունը և բարեփոխումների օրակարգը մեծապես տարբերակված են, և պետք է հաշվի առնել հետևյալ դիտողությունները՝ հիմք ընդունելով առանձին գործողությունների ծրագրերը և ընթացիկ զեկույցները:

Մի շարք երկրներ, մասնավորապես Մոլդովայի Հանրապետությունը և Հայաստանի Հանրապետությունը իրենց ժողովրդավարական կառույցներն ամրապնդելու նպատակով իրականացնում են բարեփոխումներ: Սա Մոլդովայի Հանրապետության դեպքում ներառում է խորհրդարանական և տեղական ինքնակառավարման բարեփոխումների

հետ կապված օրենսդրական միջոցառումներ, իսկ Հայաստանի դեպքում՝ իշխանությունների բաժանում, այդ թվում՝ ՀՀ ազգային ժողովի լիազորությունների ընդլայնում և բարելավված տեղական ինքնակառավարում: Մարոկկոն դարձել է Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովի անդամ: Այն կառավարության անդամների՝ դատական կարգով պատասխանատվության ենթարկելու և տեղական ինքնակառավարման բարեփոխումների ուղղությամբ արձանագրել է առաջընթաց: Եգիպտոսը ներկայացրեց սահմանադրական բարեփոխումների փաթեթ՝ նպատակ ունենալով, ի թիվս այլոց, երկիրը մինչև 2008 թվականի հուլիսը դուրս բերել արտակարգ իրավիճակից: Հորդանանն ընդունեց Տեղական ինքնակառավարման մարմինների մասին նոր օրենք, որով նախատեսվում է ավագանու անդամների և քաղաքապետերի (բացառությամբ Ամանի) ուղղակի ընտրություն և ուստի արձանագրեց առաջընթաց տեղական ժողովրդավարության խթանման գործում: Խորհրդարանական մշակույթի հետագա զարգացման հարցում կարևոր դերակատարություն կարող են ունենալ խորհրդարանների միջև ծավալվող հարաբերությունները: Ինչպես նշվել էր 2007 թվականի նոյեմբերի ԵՀԲ-ի վերաբերյալ Եվրոպական պառլամենտի զեկույցում, գործընկեր երկրների խորհրդարանների հետ համագործակցությունը խորացնելու իր մտադրություններն այս առումով կլինեն հիմնական գործոնը:

Մի շարք գործընկեր երկրներում կայացան թե՛ նախագահական, թե՛ խորհրդարանական և թե՛ տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններ: Սրանք կարևոր ազդակներ էին ժողովրդավարության զարգացման համար: Մոլդովայի Հանրապետությունում 2007 թվականի հունիսին կայացած տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններն ընդհանուր առմամբ լավ կազմակերպված էին և քվեարկողներին ընձեռում էին ընտրության իրական հնարավորություն, չնայած արձանագրված որոշ թերությունների, օրինակ՝ ոչ բոլոր թեկնածուներին էր տրված ՁԼՄ-ներով հավասար ելույթ ունենալու հնարավորությունը: Եգիպտոսի վերին պալատի ընտրություններից հետո ԵՄ նախագահությունը հրատարակեց հայտարարություն, որտեղ արտահայտվում էր ԵՄ-ի մտահոգությունը՝ կապված նրանց անցկացման հետ: 2007 թվականի սեպտեմբերին կայացած խորհրդարանական ընտրություններում Մարոկկոն արձանագրել է առաջընթաց ինչպես ընտրական գործընթացի թափանցիկության, այնպես էլ քաղաքական մրցակիցների համար ՁԼՄ-ներին հասանելիություն ընձեռելու առումով: Չնայած Ուկրաինայում արտահերթ խորհրդարանական ընտրություններ պահանջելու շուրջ ընթացող քննարկումներին, 2007 թվականին հնարավոր եղավ հասնել ժողովրդավարական գործընթացների համախմբմանը: Ընտրությունները գնահատվեցին որպես հիմնականում ժողովրդավարական ընտրությունների միջազգային ստանդարտներին համապատասխանող: 2007 թվականի նոյեմբերին Հորդանանի խորհրդարանական ընտրություններն անցկացվեցին այնպիսի օրենսդրության շրջանակներում, որում բացակայում էին որոշ միջազգային ստանդարտներ: Հորդանանը չի ընդունել միջազգային ընտրական դիտորդներին: Վրաստանում նախագահական ընտրությունները մինչև 2008 թվականի աշունը հետաձգելու առաջարկը հանգեցրեց քաղաքացիական անկարգությունների և արտակարգ դրություն մտցնելուն: Դրա արդյունքում նախագահական ընտրությունները կայացան 2008 թվականի հունվարին, որի ընթացքում պարզվեց, որ ընտրական գործընթացում տեղ էին գտել մի շարք թերություններ, այն է՝ թեկնածուներին ՁԼՄ-ներով անհավասար լուսաբանումը, քարոզարշավի նպատակներով պետական միջոցների օգտագործումը, ընտրողներին ահաբեկելու հաղորդված դեպքերը և ձայների հաշվարկման և մշակման գործընթացում տեղ գտած խախտումները: Նշված խախտումները պետք է վերացվեն, եթե Վրաստանը ցանկանում է քաղաքական բարեփոխումների համատեքստում իրագործել գործողությունների ծրագրի նպատակները: Հայաստանում 2008 թվականի փետրվարին կայացած նախագահական ընտրություններն անցկացվեցին միջազգային ստանդարտներին ընդհանուր առմամբ

համապատասխան: Այնուամենայնիվ, պետության և կուսակցության գործառույթների հստակ տարանջատման բացակայությունը և թեկնածուներին տրված անհավասար հասանելիությունը ՁԼՄ-ներին նշվեցին որպես ընտրական գործընթացում տեղ գտած թերություններ, որոնք պետք է վերացվեն: Առկա էին նաև որոշ մտահոգություններ՝ կապված արտակարգ դրության հետ, որը մտցվեց ընտրություններից հետո:

Ընտրություններին քվեարկողների մասնակցության աստիճանը կարող է որոշ դեպքերում լինել վատահոռության նշան առ այն, որ քաղաքացիները կարող են իրենց կամքն արտահայտել քվեատուփերի միջոցով: Նշված ընտրություններում մասնակցության ցուցանիշներն էին՝ Մոլդովայի Հանրապետությունում՝ 52%, Եգիպտոսում՝ 31%, Ուկրաինայում՝ 63%, Մարոկկոյում՝ 37%, Հորդանանում՝ 54%, Վրաստանում՝ 56%, իսկ Հայաստանում՝ 69%:

Որոշ երկրներում (հատկապես Հայաստանում, Վրաստանում, Մոլդովայի Հանրապետությունում և Մարոկկոյում) նախաձեռնվեցին քաղաքական բարեփոխումների առանցքային տարր հանդիսացող՝ դատական մարմինների անկախությունը և թափանցիկությունն ամրապնդելու միջոցառումներ: Շատ գործընկեր երկրներում կոռուպցիայի ընդհանուր մակարդակը մնում է մտահոգիչ: Վրաստանը, Մոլդովայի Հանրապետությունը, Մարոկկոն և Ուկրաինան ընդունեցին հակազոդող միջոցառումներ, այն է՝ նախքան օրենսդրության ընդունումը դրա հակակոռուպցիոն վերլուծությունը, բարձրաստիճան պաշտոնյաների գույքի պարտադիր հայտարարագրումը կամ իրազեկության մակարդակի բարձրացումը: Հայաստանը, Վրաստանը, Հորդանանը, Լիբանանը և Պաղեստինի գրավված տարածքը և Ուկրաինան սահմանափակ քայլեր ձեռնարկեցին թափանցիկ, հաշվետու և արդյունավետորեն գործող պետական կառավարման համակարգ ստեղծելու ուղղությամբ:

Ինչ վերաբերում է մարդու իրավունքներին և հիմնարար ազատություններին, Հորդանանը (2006 թվականի դեկտեմբեր) միացավ Երեխաների իրավունքների մասին ՄԱԿ-ի Կոնվենցիայի մանկավաճառության, երեխաների մարմնավաճառության և երեխաների պոռնոգրաֆիայի մասին կամընտիր արձանագրությանը: Եգիպտոսը (2007 թվականի փետրվար) և Հորդանանը (2007 թվականի մայիս) միացան նույն Կոնվենցիայի Զինված հակամարտություններում երեխաների ներգրավման մասին կամընտիր արձանագրությանը: Վրաստանը, Մոլդովայի Հանրապետությունը, Մարոկկոն և Ուկրաինան ևս արձանագրեցին առաջընթաց մի շարք միջազգային կոնվենցիաների վավերացման ուղղությամբ: Մի շարք երկրներ միջոցառումներ ձեռնարկեցին մարդու իրավունքների պաշտպանության և դիտանցման համար պատասխանատու կառույցների հզորացման ուղղությամբ: Հայաստանում և Ադրբեջանում ամրապնդվեց մարդու իրավունքների պաշտպանի դերակատարությունը, Մոլդովայի Հանրապետությունում ստեղծվում է Խոշտանգումների դեմ կոնվենցիայի կամընտիր արձանագրության ներպետական կանխարգելիչ մեխանիզմը, Եգիպտոսում Մարդու իրավունքների ազգային խորհուրդն ընդունեց մարդու իրավունքների խթանման և պաշտպանության գործողությունների ներպետական ծրագիր:

Ուկրաինան (2007 թվականի հուլիս) միացավ Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին միջազգային դաշնագրի կամընտիր արձանագրությանը (մահապատժի վերացում): Մի շարք երկրներ շարունակեցին փաստացի հետաձգել մահապատժի ի կատար ածումը, և Հորդանանը կրճատեց նաև մահապատժով պատժվելիք հանցագործությունների թիվը: Խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեպքեր դեռևս շարունակվում են արձանագրվել շատ գործընկեր երկրներում, թեև դրանց կատարման հաճախականության և լրջության մակարդակները չափազանց տարբերվում են: Հաճախ միջադեպեր են տեղի ունենում նախնական կալանքի ժամանակ և քրեակատարողական հիմնարկներում: Օրինակ՝ Վրաստանում, Մոլդովայի Հանրապետությունում և Ուկրաինայում որոշ առաջընթաց է արձանագրվել

խոշտանգումների և վատ վերաբերմունքի դեպքերի կանխման ուղղությամբ: Թունիսը և Մարոկկոն հանցագործների քրեական հետապնդման ուղղությամբ արձանագրեցին որոշ առաջընթաց: ԵՀՔ գործընկեր շատ երկրներում լուրջ խնդիրներ կան ՁԼՄ-ների անկախության և արտահայտվելու ազատության առումով: Հայաստանը արձանագրել է առաջընթաց ՁԼՄ-ների ազատության մակարդակը բարձրացնելու ուղղությամբ: Մի շարք երկրներում գենդերային հարցերի շուրջ ևս արձանագրվել է առաջընթաց. Եգիպտոսում պաշտոնապես արգելվել է կանացի արտաքին սեռական օրգանի (ամոթույք) հեռացումը, Մարոկկոյում քաղաքացիության օրենսգրքում կատարված փոփոխությունները թույլ են տալիս քաղաքացիության փոխանցումը մորից, Թունիսում նախաձեռնվեց Կանանց նկատմամբ խտրականության բոլոր ձևերի վերացման մասին կոնվենցիայի կամընտիր արձանագրությունը վավերացնելու ընթացակարգը: Հորդանանում, Մոլդովայի Հանրապետությունում և Մարոկկոյում աճել է քաղաքական կյանքում կանանց մասնակցության աստիճանը: Քաղաքացիական ներգրավվածության ծրագրերի իրականացման միջոցով ազգային փոքրամասնությունների պայմանների բարելավման ուղղությամբ Վրաստանում ձեռնարկվեցին որոշ քայլեր: Այս ուղղությամբ Մոլդովայի Հանրապետությունում ընդունվեց ռումինական բնակչության օժանդակման գործողությունների ծրագիր, իսկ Ուկրաինայում վավերացվեց Քաղաքացիության մասին եվրոպական կոնվենցիան: Ինչ վերաբերում է հիմնական աշխատանքային իրավունքներին, մի շարք գործընկեր երկրներում ԱՄԿ կոնվենցիաների վավերացումը և իրականացումը մնում է լուրջ խնդիր:

Ինչ վերաբերում է տարածաշրջանային հակամարտությունների լուծմանը, ԵՄ-ն բաց երկխոսություն է ծավալում բոլոր գործընկեր երկրների հետ: Մոլդովայի Հանրապետությունը և Ուկրաինան սերտորեն համագործակցում էին ԵՄ-ի հետ մերձդնեստրյան հակամարտության կարգավորման հետ կապված խնդիրների շուրջ:

Մոլդովայում և Ուկրաինայում ԵՄ սահմանային աջակցության առաքելության մանդատը երկարաձգվեց մինչև 2009 թվականի նոյեմբերի վերջը:

«EU POL COPPS» ոստիկանության վերապատրաստման առաքելությունը կրկին սկսեց գործել Պաղեստինի գրավված տարածքում, և ԵՄ նախարարները հայտնեցին իրենց պատրաստակամությունը կրկին գործի դնելու «EU BAM Rafah» սահմանում դիտանցման առաքելությունը, երբ իրավիճակը թույլ կտա: Աբխազիայում և Հարավային Օսեթիայում վստահության զարգացման միջոցառումների փաթեթի իրականացումը Վրաստանում սկսվեց 2007 թվականի աշնանը, այնուամենայնիվ, այս հակամարտությունները կարգավորելու ճանապարհին արձանագրված առաջընթացը շատ սահմանափակ է: Չնայած Հայաստանի և Ադրբեջանի նախագահների պաշտոնական հանդիպմանը, որը տեղի ունեցավ 2007 թվականին, Լեռնային Ղարաբաղի հակամարտության կարգավորման ուղղությամբ արձանագրված առաջընթացը ևս սահմանափակ է Եգիպտոսը և Հորդանանն Արաբական խաղաղապահ նախաձեռնության վերսկսման գործում ունեցան կարևոր դերակատարություն, այդ թվում՝ Արաբական լիգայի՝ վերոնշյալ նախաձեռնության իրականացման հարցերով կոմիտեում և 2007 թվականին Անապոլիսում կազմակերպված հանդիպմանն իրենց մասնակցությամբ: Վերջերս վերսկսվեցին Արևմտյան Սահարայի կարգավիճակի շուրջ բանակցությունները, սակայն մինչ օրս այդ ուղղությամբ փոքր առաջընթաց է արձանագրվել:

Վերջապես, ԵՀՔ գործընկեր երկրների մեծ մասը մեծ ուշադրություն են դարձնում իրենց միգրացիոն հոսքերի կառավարման բարելավմանը և այս կարևոր քաղաքականության շուրջ ԵՄ-ի հետ համագործակցության խորացմանը:

## Սոցիալ-տնտեսական բարեփոխումներ

Ինչ վերաբերում է մակրոտնտեսական զարգացումներին, ԵՀՔ գործընկեր երկրների մեծ մասը 2007 թվականին արձանագրեցին բարձր տնտեսական աճ: Մոլդովայի Հանրապետությունում լուրջ երաշտի հետևանքով որոշ չափով դանդաղեց տնտեսական աճը: Երաշտը վնաս հասցրեց նաև Մարոկկոյի գյուղատնտեսությանը: Լիբանանում քաղաքական անկայունությունից տուժեց երկրի տնտեսությունը: Այն երկրները, հատկապես Ադրբեջանը, որոնց եկամուտները ձևավորվում են էներգետիկայի ոլորտից, արձանագրեցին աճի բարձր տեմպեր: Կառավարության բյուջեի պակասորդը և ընդհանուր պարտքը ընդհանուր առմամբ մնում է կառավարելի: Շատ երկրներում սղաճի մակարդակը բարձրացել է ապրանքների գների գոբալ աճի պատճառով, սակայն դրամական էքսպանսիայի տեմպը որոշ դեպքերում մտահոգիչ է: ԵՄ և ԵՀՔ գործընկերների միջև երկկողմ առևտրի ծավալները զգալիորեն աճել են՝ այսպիսով ամրապնդելով հաստատված հարաբերությունները, մինչդեռ շատ գործընկեր երկրների արտաքին առևտրի հաշվեկշռի և բյուջեի պակասորդի հետ կապված իրավիճակը վատթարացել է: Մի շարք դեպքերում պակասորդը ֆինանսավորվում է խոշոր օտարերկրյա ուղղակի ներդրումներից: Բարելավումներ նկատվեցին Իսրայելի և Հորդանանի արտաքին առևտրի հաշվեկշռում: Հորդանանի դեպքում ԵՄ-ի հետ արտաքին առևտրի մեծ պակասորդը, այնուամենայնիվ, լուրջ խնդիր է և պահանջում է շարունակական ուշադրություն: Ադրբեջանում և Ալժիրում արձանագրվեցին բյուջեի ավելցուկ և արտաքին առևտրի դրական հաշվեկշիռ: Իսրայելը պահպանեց իր աճի զգալի տեմպերը, զգալիորեն կրճատեց իր պետական պարտքը և հավասարակշռեց բյուջեի պակասորդը: ԵՄ-ի դիրքը, որպես ԵՀՔ երկրների առևտրային հիմնական գործընկեր, 2007 թվականին ամրապնդվեց, հատկապես Բուլղարիայի և Ռումինիայի՝ ԵՄ-ին անդամակցությունից հետո:

Հայաստանը, Եգիպտոսը, Վրաստանը, Հորդանանը և Թունիսն առաջընթաց արձանագրեցին իրենց գործարար միջավայրը բարելավելու ուղղությամբ, ինչն իրականացվում էր այնպիսի միջոցների օգնությամբ, ինչպիսիք են՝ ընկերությունների գրանցման ընթացակարգերի պարզեցումը, լիցենզավորման վճարների նվազեցումը կամ «մեկ կանգառի» ծառայությունների ներդրումը: Ձեռնարկությունների մասին Եվրոպական միջերկրածովյան խարտիան, որին միացել են հարավային գործընկեր երկրներից շատերը, խթանել է այս գործընթացը: Այնուամենայնիվ, սա դեռևս չի հանգեցրել օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալի ընդլայնմանը բոլոր դեպքերում, մասնավորապես որոշ ԵՀՔ միջերկրածովյան գործընկերների շրջանում: 2007 թվականին Եգիպտոսում, Վրաստանում և Մոլդովայի Հանրապետությունում օտարերկրյա ուղղակի ներդրումների ծավալները հասել են ռեկորդային մակարդակների:

Շատ ԵՀՔ երկրներում արձանագրվել են ստվերային տնտեսություններ և ընդհանուր առմամբ տնտեսական կառավարումը բարելավման կարիք ունի: Չնայած տնտեսական աճի հարաբերականորեն բարձր տեմպերին, շատ ԵՀՔ գործընկերներ պայքարում են գործազրկության բարձր մակարդակների դեմ, որը մասնավորապես առկա է ԵՀՔ միջերկրածովյան երկրներում երիտասարդների շրջանում: Իսրայելում և Ուկրաինայում արձանագրվել է գործազրկության մակարդակի աստիճանական կրճատում: Հիմնական մարտահրավերը պատշաճ աշխատանքային պայմանների ապահովման խթանումն է: Չնայած որոշ երկրներում գործադրված ջանքերին՝ սոցիալական և տնտեսական կյանքում կանանց դերը չի բարելավվել:

2008 թվականի հունիսին Հանձնաժողովը կիրառարակի իր «ԵՄ հարևան երկրների տնտեսության ուսումնասիրություն»-ը:

## **Ոլորտային բարեփոխումներ**

Հավելվածում ներկայացված Ընթացիկ ոլորտային զեկույցում կարելի է գտնել ԵՀՔ գործողությունների ծրագրերով նախատեսված քաղաքականության այլ ոլորտներում արձանագրված առաջընթացի ամփոփ նկարագիրը, ինչպես նաև կառավարման և տնտեսական որոշ ցուցանիշներ: Ընդհանուր առմամբ, իրենց ոլորտային քաղաքականությունների փոփոխման, ռազմավարությունների ընդունման, և բարեփոխումների, արդիականացման և ԵՄ տնտեսության ու շուկայի հետ իրենց ինտեգրման ճանապարհին քայլերի ձեռնարկման հարցում ԵՀՔ գործընկեր երկրներում արձանագրվել է առաջընթաց: Նրանք ներմուծեցին նոր օրենսդրություն և հզորացրեցին իրենց ինստիտուցիոնալ կարողությունները: Երկրորդային օրենսդրությունը և բարեփոխումների իրականացման համար վարչական կարողությունները շարունակում են մնալ հիմնական մարտահրավերը: Երկրներում և ոլորտներում արձանագրվող առաջընթացը տարբերվում է արագությամբ և մակարդակով: Որոշ ԵՀՔ գործընկեր երկրներում կարելի է նկատել ներպետական օրենսդրությունը ԵՄ իրավունքին համապատասխանեցնելու մեծ պատրաստակամություն: Վերջինիս աստիճանը տարբերվում է երկրից երկիր և պայմանավորված է կոնկրետ ոլորտով: Ավելին, ԵՀ Ֆինանսական աջակցության տրամադրումը պայմանավորված է կոնկրետ քաղաքականության իրականացմամբ և շեշտը դնում է ԵՀՔ գործողությունների ծրագրերով համաձայնեցված բարեփոխումների առաջնահերթությունների վրա:

Քաղաքականության մի շարք ոլորտներում առաջընթաց կարող է արձանագրվել միայն ժամանակի ընթացքում, ուստի ընթացիկ զեկույցում կանոնավոր կերպով նշվում է ընթացիկ միջոցառումների, ինչպես նաև արդիականացման ուղղությամբ իրականացված քայլերի մասին: Բոլոր ոլորտներում ԵՀ-ի և ԵՀՔ գործընկեր երկրների միջև քաղաքականության հարցերով երկխոսությունն ամրապնդվել է:

Ոլորտային քաղաքականության հարցերով երկխոսությունը կարևոր հարթակ է ԵՀՔ-ի նպատակներով հետապնդվող «գործընկերություն հանուն բարեփոխումների» ծրագրի համար: Քաղաքացիների կարիքներին և իրավունքներին արձագանքող պետական կառավարման համակարգ ստեղծելու գործընթացը, այն է՝ գործերի՝ «մեկ կանգառի» սկզբունքով գրանցումը, քաղաքացիներին ուղղված և ոչ կոռումպացված ուստիականական կամ մաքսային ծառայությունների տրամադրումը, առևտուրը և փոխադրումները հեշտացնող նավահանգիստների արդյունավետ կառավարումը կամ բնապահպանական տեղեկատվության մատչելիությունը, շարունակական լինելու դեպքում, լուրջ քաղաքական օժանդակություն է արդյունավետ կառավարման և իրավական պետության համար:

## **Բազմակողմ զարգացումներ**

2005 թվականի նոյեմբերին Բարսելոնայի գազաթաժողովի ժամանակ ընդունվեց հինգ տարի տևողությամբ աշխատանքային ծրագիր, և 2006 թվականի նոյեմբերին Տամպերեում կայացած նախարարական հանդիպման ժամանակ եվրոպական միջերկրածովյան գործընկերներն ընդունեցին 2007 թվականի աշխատանքային ծրագիր: 2007 թվականի ընթացքում զգալի աշխատանք տարվեց համագործակցության վերաբերյալ 4 գլուխների շուրջ, և ԵՀՔ-ի շրջանակներում ծավալված քաղաքականության հարցերով երկկողմ երկխոսությունը շարունակեց նպաստել շատ ոլորտներում տարածաշրջանային համագործակցության ուղղությամբ արձանագրվող առաջընթացի խթանմանը:



Տամայերեում համաձայնեցված 21 նախաձեռնություններից շատերն իրականացվեցին 2007 թվականի վերջին: 2007 թվականի նոյեմբերին Լիսաբոնում կայացած եվրոպական միջերկրածովյան գործընկեր երկրների նախարարների հանդիպման ժամանակ համաձայնեցվեց 2008 թվականի նախաձեռնությունների նոր փաթեթը: Քաղաքական և անվտանգության հարցերով երկխոսության շրջանակներում շեշտը դրվեց Միջին Արևելքում քաղաքական իրավիճակի կանոնավոր վերանայման, ահաբեկչության դեմ պայքարի Վարքազծի կանոնագրի իրականացման, ԱՊԵՔ-ի և անվտանգության հարցերի շուրջ երկխոսության խորացման, ընտրությունների և քաղաքացիական հասարակությանը, մարդու իրավունքներին և ժողովրդավարությանը վերաբերող նախաձեռնությունների ոլորտում համատեղ համագործակցության շուրջ տարածաշրջանային երկխոսության ծավալման վրա: Տնտեսական համագործակցության ոլորտում եվրոպական միջերկրածովյան ներդրումների և գործընկերության գործիքի, եվրոպական միջերկրածովյան երկրների պետական ֆինանսների գծով փորձագետների ցանցի ստեղծման, ծառայությունների մատուցման կազմակերպությունների վարման, հիմնադրման իրավունքի և մինչև 2010 թվականը և դրանից հետո ազատ առևտրի ոլորտի նպատակի իրագործման ուղղությամբ աշխատանքը շարունակելու նպատակով բարձրաստիճան պաշտոնյաների խմբի ստեղծման շրջանակներում ֆինանսական համագործակցության ծավալման ուղղությամբ արձանագրվեց առաջընթաց: Երկխոսություն ծավալվեց նաև մի շարք ոլորտներում, այդ թվում՝ բնապահպանական մարտահրավերների շուրջ, որոնց առջև կանգնած են եվրոպական միջերկրածովյան գործընկեր երկրները: Էներգետիկայի ոլորտում 2007 թվականին եվրոպական միջերկրածովյան երկրների Էներգետիկայի նախարարների մակարդակով կազմակերպված հանդիպման ժամանակ հաստատվեց 2008-2013 թվականների գերակայությունների գործողությունների ծրագիրը: Ինչ վերաբերում է մշակութային և հասարակական ոլորտներին, ակնկալվում էր քաղաքացիական հասարակության առավել մեծ ներգրավվածություն: Երկխոսության շրջանակներում շեշտը դրվեց այնպիսի խնդիրների վրա, ինչպիսիք են հասարակությունում կանանց դերը, բարձրագույն կրթությունը, գիտահետազոտությունը և տեղեկատվական հասարակությունը: ԵՀՔ գործընկերների հետ քաղաքական երկխոսությունը ևս ամրապնդվեց 2007 թվականի դեկտեմբերին Լիսաբոնում կայացած ԵՄ-Աֆրիկա գագաթաժողովից հետո, որի ժամանակ ընդունվեցին ԵՄ-Աֆրիկա համատեղ ռազմավարությունը և առաջին գործողությունների ծրագիրը: Այն ԵՄ-ի և Աֆրիկայի գործընկեր երկրների միջև հարաբերություններում համապատասխանաբար կստեղծի հետագա համագործակցության ուղիներ:

2008 թվականի մարտին Եվրոպական խորհուրդը եվրոպական միջերկրածովյան երկրների համար հաստատեց Միության սկզբունքը, որը կընդգրկի ԵՄ անդամ պետությունները և ԵՄ անդամ պետություն չհանդիսացող միջերկրածովյան մերձառափնյա պետությունները: Այն հրավիրեց Հանձնաժողովին, որպեսզի վերջինս Խորհրդին ներկայացնի այսպես կոչված «Բարսելոնայի գործընթաց, միություն միջերկրածովյան երկրների համար» գործընկերության մեթոդները սահմանելու համար անհրաժեշտ առաջարկները՝ 2008 թվականի հուլիսի 13-ին կայանալիք գագաթաժողովի ակնկալիքով: Հանձնաժողովն արագ կերպով կներկայացնի այդ առաջարկները, և այս գործընթացում խորհրդակցություններ կկազմակերպի նաև հարավային հարևանների հետ:

2007 թվականի ապրիլի հաղորդագրությունում Հանձնաժողովը մանրամասն ներկայացրեց Սևծովյան համագործակցության նախաձեռնությունը՝ ի պատասխան Սևծովյան տարածաշրջանային համագործակցության ընդլայնման համար պահանջվող մարտահրավերների և հնարավորությունների: Այս նախաձեռնության համար շահավետ է Բուլղարիայի և Ռումինիայի՝ ԵՄ-ին անդամակցությունը, ինչպես նաև Թուրքիայի անդամակցության գործընթացը, որը լրացնում է ԵՀՔ-ի շրջանակներում գործադրվող

երկկողմ ջանքերը և տարածաշրջանում իրականացվող այլ քաղաքականությունները: Այն առաջարկում է տարածաշրջանային համագործակցության նոր հարթակ ԵՄ-ի, Թուրքիայի, համաձայնեցված գործողությունների ծրագրեր ունեցող բոլոր արևելյան ԵՀՔ գործընկերների և Ռուսաստանի Դաշնության ներգրավմամբ: Խորհրդի կողմից Սևծովյան համագործակցության հաստատումից հետո Հանձնաժողովը սկսեց իրականացնել մի շարք կոնկրետ միջոցառումներ, հատկապես էներգետիկայի, տրանսպորտի, շրջակա միջավայրի, ձկնաբուծության, միգրացիայի և քաղաքացիական հասարակության զարգացման ոլորտներում: Սևծովյան տնտեսական համագործակցության կազմակերպությունում Հանձնաժողովը ստացավ դիտորդի կարգավիճակ՝ դրա հետ զարգացնելով իր աշխատանքային հարաբերությունները: 2008 թվականի փետրվարի 14-ին Կիևում տեղի ունեցավ ԵՄ-ի և Սևծովյան համագործակցության գործընկեր երկրների արտաքին գործերի նախարարների հանդիպումը: Հանդիպման ժամանակ ընդունվեց համատեղ հայտարարություն, որով սկսվեց Սևծովյան համագործակցությունը՝ որպես ընդհանուր, երկարաժամկետ հեռանկար: 2008 թվականի հունիսին Հանձնաժողովը Խորհրդին կներկայացնի Սևծովյան համագործակցության շրջանակներում իրականացված գործողությունների առաջին տարվա վերլուծությունը:

**Գործընկեր երկրների հետ ԵՄ հարաբերությունների հետագա զարգացումը  
Գործողությունների ծրագրերի հետագա զարգացումը**

Խորհուրդը 2008 թվականի փետրվարի իր եզրակացությունների մեջ ընդգծել է Եվրոպական հարևանության քաղաքականության նպատակների խթանման հարցում գործողությունների ծրագրերի առանցքային դերը: Սույն հաղորդագրությունում նշված առաջընթացը մեծապես օժանդակում է այս գնահատականին: ԵՄ-ի և իր գործընկերների միջև պայմանագրային հարաբերություններին գործնական բնույթ տալու գործում առանցքային նշանակություն ունեին գործողությունների ծրագրերը, որոնք դոնոր հասարակության համար ևս դառնում են կարևոր հենակետեր: Քանի որ այս հարաբերությունները սերտանում են, և իրագործվում են որոշ նպատակներ, մինչդեռ համաձայնեցվում են նորերը, անհրաժեշտ կլինի համապատասխանաբար լրամշակել այս գործիքները: Նման լրամշակման համար Գործողությունների ծրագրերով նախատեսվում է դրույթ, ինչը հնարավորություն կընձեռի իրենց համատեղ աշխատանքի կազմակերպման համար նախատեսված փաստաթղթում արտացոլել կողմերի հավակնությունները: Հանձնաժողովը համարում է, որ այս գործիքները, անկախ նրանց անվանումից, կշարունակեն նաև օգտակար լինել ԵՀՔ գործընկերների հետ կնքվելիք նոր համաձայնագրերի համատեքստում:

Մինչ այժմ առաջին սերնդի գործողությունների ծրագրերի իրականացման ընթացքում ձեռքբերված փորձը ցույց է տալիս, որ հետագա լրամշակումները պետք է հանգեցնեն այնպիսի փաստաթղթերի մշակմանը, որոնք առավել հստակ կսահմանեն գործընկեր երկրների հատուկ նպատակները և կարողությունները՝ արտացոլելով ԵՄ-ի՝ իր գործընկերների հետ տարբերակված հարաբերությունները, միևնույն ժամանակ նաև խթանելով ԵՄ օրենսդրությանը և ստանդարտներին կարգավորող շրջանակի համապատասխանեցման նպատակով ձեռնարկվող իրագործելի քայլերը: Այս տարբերակումը կհանգեցնի նաև գործընկեր երկրների մասով առավել մեծ վերահսկողության իրականացմանը:

Գործողությունների ծրագրերի հիմնական առանձնահատկությունները, լինելով հարաբերականորեն կոնկրետ, ժամանակային առումով սահմանափակ և ուղղված գործողությունների իրականացմանը, պետք է պահպանվեն և բարելավվեն: Գործողությունների ծրագրի նպատակների իրագործման մասով ձեռնարկված միջոցների

հստակ հերթականության սահմանումը ևս օգտակար կլինի: Ընդհանուր առմամբ, գործողությունների ծրագրերի շրջանակը (այսինքն՝ հասցեագրված ոլորտների թիվը) պետք է պահպանվի, քանի որ վերջինս ապահովում է գործընկերների հետ ԵՄ-ի հարաբերությունների բազմակողմանիությունը : Պետք է իրականացվի գործողությունների ծրագրի իրականացման շրջանակի իրատեսական վերլուծություն:

### **Գործընկերների հետ հարաբերությունների հետագա զարգացումները**

Այսպիսով, ԵՀՔ-ն աստիճանաբար դառնում է ԵՄ-ի և իր գործընկերների միջև առավել սերտ և արգասաբեր հարաբերությունների զարգացումն ապահովող գործիք: ԵՄ-ն պետք է ներկայումս շարունակի իր որդեգրած մոտեցումը՝ 1) խթանելու քաղաքականությունը և դրա իրականացումը, որպեսզի այն հանգեցնի առավել հստակ արդյունքների, 2) հետամուտ լինելու բարեփոխումների աստիճանական, կատարողականի վրա հիմնված և տարբերակված ուղուն և 3) ցուցաբերելու պատրաստակամություն՝ ընտրված գործընկերների հետ հարաբերությունները սերտացնելու գործում, եթե սա երաշխավորված և ցանկալի է համապատասխան երկրների կողմից:

4 երկրների դեպքում գործողությունների ծրագրերի իրականացման շուրջ համատեղ աշխատանքն այնպես է ընթացել, որ ապահովվել է ԵՄ-ի հետ հարաբերությունների սերտացումը: Յուրաքանչյուր դեպքում սա կիրականացվի հատուկ հանգամանքներին համապատասխանեցված, ԵՀՔ-ի ընդհանուր փիլիսոփայության, այդ թվում՝ համաձայնեցված հենանիշերի սկզբունքին համահունչ: Ուկրաինայի դեպքում այս գործընկերության համար սահմանվում է նոր հավակնոտ շրջանակ նոր Ընդլայնված համաձայնագրի շուրջ ծավալվող բանակցությունների միջոցով , որոնք ընթանում են չափազանց արագ և կներառեն դրույթներ համընդգրկուն ազատ առևտրի տարածքի կարգավորման համար: Մոլդովայի Հանրապետությունը մեծ առաջընթաց է արձանագրել ԵՀՔ գործողությունների ծրագրի իրականացման գործընթացում և առաջխաղացում ապահովելու հարցում ցուցաբերել է քաղաքական մեծ կամք: Ինչպես 2008 թվականի փետրվարին Խորհուրդն ամփոփեց, ԵՄ-ն պատրաստ է կայուն առաջընթացի հիման վրա սկսել նոր համաձայնագրի շուրջ աշխատանքները, որը հարմարեցված կլինի Մոլդովայի Հանրապետության շահերին և դուրս կգա ԳՀՀ-ի շրջանակներից: Քննարկումներ են ծավալվում նաև Մարոկկոյի հետ ծավալվում են քննարկումներ վերջինիս համար «արտոնյալ կարգավիճակ» ձեռք բերելու կոնկրետ եղանակների շուրջ, որը ներառում է մարդկանց տեղաշարժը կարգավորող էական միջոցների և անձանց հետընդունման հարցում առաջընթացի արձանագրման վերաբերյալ ընդգրկուն փաթեթ: Իսրայելի դեպքում աշխատանքային խումբը դիտարկում է այն ոլորտները, որտեղ ԵՄ-ի հետ հարաբերությունները պետք է դրվեն հատուկ կարգավիճակի վրա. սա պետք է ներառի թե՛ քաղաքական երկխոսության խորացումը և թե՛ Իսրայելին ԵՄ տնտեսության մեջ և շուկայում, ինչպես նաև մի շարք առանցքային ԵՄ քաղաքականությունների մեջ ընդգրկելը:

Հորդանանի և Թունիսի հետ մի շարք ոլորտային քաղաքականությունների շուրջ կշարունակվի համատեղ աշխատանքը՝ օժանդակելով երկրների բարեփոխումների համապատասխան օրակարգերի իրականացմանը:

Այլ երկրների հետ ԵՀՔ գործողությունների ծրագրերի իրականացումը սկսվել է միայն վերջերս: Հայաստանի, Եգիպտոսի և Վրաստանի հետ առաջընթացը կհիմնվի արդեն զարկ տրված խոստումնալից մեկնարկի վրա՝ յուրաքանչյուր դեպքում հաշվի առնելով հատուկ հանգամանքները և երկրների հավակնությունները: Ադրբեջանի դեպքում մի շարք ոլորտներում դեռևս տարվում են աշխատանքներ, այդ թվում՝ համագործակցություն է ծավալվում էներգետիկայի ոլորտում:

Լիբանանի և Պաղեստինի գրավված տարածքի դեպքում ԵՀՔ գործողությունների ծրագրերն ամուր Կիսն Բարեփոխումների իրականացման համար, եթե ստեղծված պայմանները թույլ տան ապահովել առավել մեծ առաջընթաց: Միևնույն ժամանակ, հաստատված հարաբերությունները շարունակում են շատ մակարդակներում ստեղծել վստահություն և զարգացնել կարողություններ: Պաղեստինյան իշխանությունների հետ Համատեղ կոմիտեի հանդիպումը, որը տեղի կունենա 2008 թվականի երկրորդ եռամսյակին, միտված է իր գործողությունների ծրագրի համատեղ իրականացման վերսկսմանը:

ԵՀՔ-ում ընդգրկված չորս երկրների դեպքում դեռևս չեն համաձայնեցվել գործողությունների ծրագրերը, սակայն որոշ դեպքերում այնուամենայնիվ հարաբերություններում հնարավոր եղավ որոշ առաջընթաց արձանագրել: Ալժիրի դեպքում դեռևս իրականացվում է Ընկերակցության համաձայնագիրը, հարաբերություններն արագորեն սերտանում են մի շարք ոլորտներում՝ սկսած Էներգետիկայից մինչև միգրացիայի ոլորտը: Լիբիայի դեպքում հարաբերությունները շոշափելիորեն բարելավվել են, Հանձնաժողովն առաջարկում է այս կարևոր երկրի հետ հավակնոտ և ընդգրկուն համաձայնագրի կնքման շուրջ սկսել բանակցությունները: Միջին դեպքում հարաբերությունները կարող են զարգանալ Ընկերակցության համաձայնագրի նախագծի հիման վրա, եթե քաղաքական հանգամանքները թույլ տան: Թեև նախարարական մակարդակով Բելառուսի հետ հարաբերությունները մնում են լարված երկրում տիրող ներքին իրավիճակի պատճառով, այնուամենայնիվ հարաբերությունները զարգացնում են տեխնիկական մակարդակում: Մինչև 2006 թվականի հարաբերության գրասենյակի բացումը հնարավորություն կստեղծի ամրապնդել հաստատված հարաբերությունները, ինչպես նաև կապերը Բելառուսի քաղաքացիական հասարակության հետ:

### **Առավել տեսանելի քաղաքականություն**

2006 թվականի դեկտեմբերի Հանձնաժողովի հաղորդագրությունում նշվեց բարեփոխումների գործընթացի նկատմամբ վերահսկողությունն ուժեղացնելու և ԵՄ-ին առավել մոտեցող իր հարևանների համար ԵՄ օժանդակությունը խթանելու նպատակով Եվրոպական հարևանության քաղաքականության տեսանելիությունը բարձրացնելու անհրաժեշտությունը: 2007 թվականի սեպտեմբերին Բրյուսելում կայացած համաժողովից բացի, որին ներկա էին նախարարներ և ԵՄ-ի ու գործընկեր երկրների քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներ, 2007 թվականին նկատվեց շատ գործընկեր երկրներում գործողությունների ծրագրով ստանձնած պարտավորությունների մասով հասարակության իրազեկության, ինչպես նաև ԵՀՔ-ի շուրջ քաղաքացիական հասարակության կազմակերպությունների ուշադրության մակարդակի շեշտակի բարձրացում: ԵՄ-ում հարևանների հետ հարաբերություններն ամրապնդելու հարցը մոտեցել է ռազմավարական քննարկումների կիզակետին: Հանձնաժողովն այլ կառույցների, անդամ պետությունների և գործընկեր երկրների հետ համագործակցության ժամանակ հիմք կընդունի այս ձեռքբերումները:

(1) Ալժիր, Հայաստան, Ադրբեջան, Բելառուս, Եգիպտոս, Վրաստան, Իսրայել, Հորդանան, Լիբիա, Լիբանան, Մոլդովայի Հանրապետություն, Մարոկկո, Պաղեստինի գրավված տարածք, Սիրիա, Թունիս և Ուկրաինա: Անտարակույս «գործընկեր երկրներ» եզրույթն այսուհետ կօգտագործվի՝ ներառելով նաև Պաղեստինի գրավված տարածքը:

(2) COM(2006) 726 :

(3) COM(2007) 774 :